ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

«ՇՀԾՁԲ-15/23-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ցուցանակների և հարակից առարկաների պատրաստման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.03.2017թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ. Դանիելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Հարությունյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Ե.Հովհաննսիյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԾՁԲ-15/23-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1. «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շերամի փ. 51շ. 49բն)
2. «ԱՏԱ» ՍՊԸ (ք. Երևան, Մալխասյանց 25)

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 15.03.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում/հայտում առկա փաստաթղթերում/ կան թերություններ, մասնավորապես՝

2.1 **«ԱՏԱ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտի.

ա/ Հավելված 1-ում բացակայում է հարկ վճարողի հաշվառման համարը/ՀՎՀՀ/,

բ/ Հավելված 4-ում՝ գնային առաջարկում բացակայում է տառերով գրված առաջարկված ընդհանուր գինը:

2.2 **«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 2, Հավելված 3.2, Հավելված 3.4, Հավելված 3.6 -ում չի պահպանվել հրավերով նախատեսված օրինակելի ձևերը/այլ ծածկագրով հրավերի փաստաթղթեր են ներկայացված/, Հավելված 4՝ գնային առաջարկում ներկայացված են այլ բնույթի աշխատանքների անվանումներ իրենց համապատասխան գնային առաջարկներով:

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **«ԱՏԱ» ՍՊԸ-ի և «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.11 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը:

2. Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգի 1 չափաբաժինը հայտարարել չկայացած:

3. Հաստատել ընթացակարգի 1 չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Հարությունյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ. Անտոնյան

_____ Ե. Հովհաննսիյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան